

X Ս. ԷջՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ԸԹՈՌՈՒ ԵՒ ՌՈՒՍՑ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՍՆ ՅԵՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ  
ԺԱԴՈՒՄԸ<sup>1)</sup>

Եկատերինէ Կայսրուհին փութաջան իրագործող հանդի-  
սացաւ Գետրոս Մեծի գաղափարի, որ էր կործանել մահմեդա-  
կան տէրութիւնը և անկախութիւն պարգևել նորա լծի տակ  
ընկճուած քրիստոնէական ազգերին:

Յունական կոչուած ծրագիրը, որ այն ժամանակ զբաղեց-  
նում էր մեծ Կայսրուհու պետական մարդոց միտքը, բօվանդա-  
կում էր նաև դիտաւորութիւն վերականգնել Հայաստանի  
քաղաքական անկախութիւնը Ռուսիայի գերագոյն հովանաւու-  
րութեան ներքոյ: Այդ մտքին առանձնապէս համակրում էին  
Պօտեօմիին իշխանը և Ա. Վ. Սուվորովը: Թէ ո՞րքան նրանք  
ջատագով էին այդ գաղափարին, կարելի է տեսնել ոչ միայն  
միւս պատմական արձանագրութիւններից՝ այլ և Յովսէփ ար-  
քեալիսկոպոսի յիշտակարանից՝ «1 յունվարի 1780 ամի», զը-  
րում է նա, «ինձ մօտ եկաւ Յ. Պ. Գօրիին և Կաստեան գա-  
ւառները նուաճելու համար դէպի Պարսկաստան ձեռնարկուե-  
լիք արշաւանքի լուրը հաղորդեց. Հարցրեց, թէ քաղաքներն  
ինչ հեռաւորութիւն ունին իրարիս, թէ ո՞րքան հայոց և մահ-  
մեդական զօրք կայ Դերբենդից ու Գիլանից մինչև Թաւրիկ և  
այստեղից՝ մինչև Ղարաբաղ ու Շիրվան: Ի՞նչ որ գիտէի՝ ասացի,  
և նա արձանագրեց: — «2 յունվարի մեզ այցելեց Գեներալ Պօ-  
րուչիկ Ա. Վ. Սուվորովը: Նա էլ միւնոյն խնդրի մասին շատ

1) Տես «Լուսայ» 1904 № 5.

հարցեր առաջարկեց. հանդամանօրէն տեղեկութիւն խնդրեց Արարատեան Մայր Աթոռի վիճակի մասին և մեծամիծ յոյսեր տուաւ, թէ մեր տիրապետութիւնը վերստին կը հաստատուի։ — «Յ յունվարի Գ. Պ. Պոտեօմկին իշխանի պատուէրով ևս և Յ. Լ. Լազարել նրա մօս գնացինք՝ շատ խօսեցինք մեր ազգի և Հայաստանի ազտառութեան մասին։ Նա ինքն երկար հարցումներ արաւ մեր ազգի, Հայրապետական Աթոռի և Կաթողիկոսի դրութեան մասին։ Մենք թափանձանօք աղաչեցինք նրան վերականգնել Մեծ Հայաստանում, այն է նրեանում, մեր տիրապետութիւնը։ Նա պատասխանեց, թէ այդ հնարաւոր գործ է, բայց թէ դրա համար անհրաժեշտ է, որ Հայրապետն ու տեղական տանութերներից ոմանք խնդիր տան իրենց պատելու մասին, որպէս զի օգնութիւն հասնելու առիթ լինի։

Այնուեատ 13 յունվարի Սուվորովը խօսակցութիւն ունեցաւ Յովսէփ սրբազնի հետ Ղարաբաղի մելիքների մասին, և սրբազնը մի առանձին տեղեկագիր ոուաւ նրան այդ նիւթի վերաբերմամբ, որ հրատարակած է հայոց ազգի պատմութեան վերաբերեալ դիւանական թղթերի Հաւաքածուի Բ. հատորում (Էջ. 52—63)։

Թուի թէ հայոց ազատութեան գործի նախաձեռնութիւնն էջմիածնի Հայրապետին թողնելու գաղափարն էր, որ դրդեց Պոտեօմկին իշխանին Ղուկաս կաթողիկոսի մօտ ուղարկել դոկտօր Յակոբ Ռէյնէգսին<sup>1)</sup>), որ և ճանապարհ ընկաւ Պոտեօմ-

<sup>1)</sup> Դոկտօր Յակոբ Ռէյնէգսը ծնուած է Այսլէրէնում 1744 թ.: Խւր իսկական ազգանունն Այլիս էր, բայց յայտնի չէ, թէ ինչո՞ւ Ռէյնէգսի փոխեց։ Երիտասարդական հասակից ուսել էր ընական գիտութիւններ և մանաւանդ բժշկութիւն։ Աշխարհներ տեսնել փափագելով, իւր հայրենիքը թողեց և 1776 թ. Վենետիկ և Կ. Պօլիս գնադ, այն տեղից թոքատ, էրցջում և Կարսի վրայով Պարսկաստան՝ յատկապէս էջմիածնինը տեսնելու համար, ուր հաւանականօրէն հասաւ 1778 թ.: Այդ միջոցին հայրապետական աթոռի վրայ նստած էր Սիմեոն կաթողիկոսը, որ գտնւում էր ամարանցում։ Ռէյնէգսը ներկայացաւ նրան Կ. Պօլսի պատրիարքի լանձնարարական նամակով։ Նրան մի գորգազարդ և արեելեան կերպով կահաւորուած շքեղ վըրան յատկագրին։ Կաթողիկոսի վսեմ ու բարեմայն պատկերն և զբանի ձեռքը հիազրին նրան։ Ռէյնէգսի վկայութեամբ՝ Հայրապետը մի ընդհանուր յարգանք վայելող և իւր ուղեորութիւնների շնորհիւ շատ բաներ գիտցող մարդ էր, և Ռէյնէգսը շատ օգտաւէտ գիտելիքներ ստացաւ նրանից։ Դոկտօրը 9 օր

կին իշխանի կողմից մի գրութիւն և ընծայ տանելով հայրապետին և նամակներ Յովսէփ արքեպիսկոպոսից, Յ. Լ. Լազարեցից և Մանուչարեանից: Սակայն կաթողիկոսին այս գործում առաջին քայլն անել տալու փորձը յաջողութիւն չդտաւ. Դու կասն զգոյց վերաբերուեցաւ Պետերուրդի առաջարկութեան և Եջմիածնի վրայ նոր աղէտներ կուտակելու վտանգից վախենալով, խոյս տուեց հրեւ է մասնակցութիւնից, Կաթողիկոսը դոկտօր Յակոբի Եջմիածին դալը Յովսէփ սրբազանին յայտնելիս՝ ի միջի այլոց զրում էր 17 յունվարի 1783 ամի, թէ Շն զոր ինչ ի բերան ասելին էր, զամենայն ծանոյց և իմացաք: Մեք ևս գրեցաք չնորհակարութեամբ զպատասխանի մեծի իշխանին և զմերցցն: Եւ զոր ինչ վայել էր, ընդ իւն խօսեցեալ և ըստ արժանույն շահեալ, ուղերուեցաք աստի, տուեալ նմա և զայս թուղթ: Որում, թէ դէպ լիցի զքեզ տեսանել, զիտելոց ևս զինչ խօսելն մեր ըստ հարկի և ըստ ձեռնտուութեան ներկայիսա: «Ինչ որ դոկտօրը բերանացի ասելու էր մեզ՝ ասաց, և լիովին իմացանք, և ամեն բան ինչ որ պէտք էր, խօսեցինք... Նըր տեսնես նրան, կիմանաս, թէ ի՞նչ ասացինք նրան, ի նկատի առնելով ներկայ ժամանակիս պահանջները»:

Դուկաս կաթողիկոսի այդ զգուշաւոր ընթացքը մի այնպիսի խնդրի վերաբերմամբ, որ ոգենորում էր Ռուսիայում և Հնդկաստանում բնակուող, ուստի և Հայաստանի իսկական կացութեան անտեղեակ հայերին, դժգոհութիւն պատճառեց նըրանց. նրանք, կարծիք, կասան կշտամբել հայրապետին, ասե-

---

մաց այնտեղ և մեծ ափսոսանքով մեկնեցաւ «այդ՝ գուցէ աշխարհի ամենալաւ անկիւնից»: Նա սահպուած էր ածապարել չետելու վրաց Հերակլ թագաւորի հրաւէրին, որի մօս և մէկ ու կէս տարի մաց Թիֆլիզում, իբրև արքայի բժիշկ: Շէյնէգսի կենսագրի ասելով՝ թագաւորն իւր իսուսումները չկատարեց, և այդ եղաւ պատճառ Շէյնէգսի հեռանալուն Թիֆլիզից: Շէյնէգսը գնաց Պետերուրդ և մի տեղեկագիր տուաւ Պոտեօմկին իշխանին Վրաստանի դրութեան մասին և մերձաւոր մասնակցութիւն ունեցաւ Վրաստանը Ռուսիայի հովանաւորութեան ներքյ ընդունելու համար եղած բանակցութիւնների մէջ, Նըրան վերադարձրին Վրաստան Ռուսիայի ներկայացուցչի պաշտօնու: 1793 թ. մի քաղաքագիտական իմաստ ունեցող յանձնարարութիւն արձւեցաւ նրան առ Դուկաս կաթողիկոսը: Շէյնէգսը այդ յանձնարարութիւնը կատարելուց յետոյ կրկին գնաց Պետերուրդ: Պոտեօմկին իշխանը հաւատարմութիւն էր ընծայում նրան և տաճկական պատերազմի ժամանակ

լով, թէ նա խոյս է տալիս հայոց աղատութեան գործին արդեամբ մասնակցելուց և իրը թէ անտարբեր է դէպի աղդի վիճակը. Ոյդ կշտամբանքը նոյն իսկ կաթողիկոսի ականջին էլ հասաւ, և նա մի ընդարձակ գրութեան մէջ առ հնդկաբնակ Շամիր խանը, որ այն դարու ամենավրծունեայ աղդասէրներից մէկն էր, բացատրեց իւր հայեացքը յիշեալ խնդրի վերաբերմամբ, ցոյց տալով և այն պատճառները, որոնք ստիպում էին իրեն իւր բռնած ընթացքին հետեւել: «Դրած էիր ինձ, որ մեր աղդի և աշխարհի աղատութեան համար հոգ տանեմ, և յիշատակած էիր այդ նպատակին ծառայող մի քանի միջոցներ: Խօսքերդ քո ջերմ աղդասիրութեան և աղդի մասին ունեցած հոգածութեան ապացոյց են: Երանի թէ դըանք գոնէ մասմբ իրագործելի լինէին. դրա համար սակայն անհրաժեշտ է, որ մեր աղդը հաւատացողների և բարեմիտների իշխանութեան ներքոյ գտնառէր և ապահովութիւն վայելէր, որպէս զի կարենայինք նրանց օգնութեամբ երջանկութեան թեկնածել. բայց ահա անողորմ թշնամիների վայրագութեան ենք մատնուած. և քանի որ նոյն իսկ հաւատարիմ ծառայութեամբ անկարող ենք դժութիւն գտնել նրանցից, ի՞նչ կինէր, եթէ մենք անհազանդութիւն ցոյց տայինք. Առ այս դու կտսես, թէ մեզ հաճելի է ստրկանալ անօրէններին և մենք աղատութիւն սիրող չենք. սակայն օրհնեալ որդի, եթէ դու մեր երկիրը գայիք, Զովքայից մինչև այստեղ և ուրիշ կողմերը քջէիք, ուր որ աղքում են մերայինք, աչքերովդ կըտեսնէիր նրանց թշուառ կացութիւնն և իշխանների բռնութիւնը և անձամբ կըհամոզուէիք, որ այդ դիտումները չեն կարող իրագործուել, և եթէ իրագործելի լինէին, միթէ այնքան յիմնար ենք, որ չկամենայինք տաւապանքներից աղատուել...<sup>1)</sup>

Մոլդավիա կանչեց նրան: Իէյնէզոը կարծեօք իմօտոյ ծանօթէր Ցովսէի Սրբազննե, Լազարեանների և Մանուչարեանների հետ: Սրբազնն իւր յիշատակարանների մէջ ասում է, թէ 1793 թ. նրան բժշկում էր Իէյնէզո դօկտորը: Իէյնէզոը կոյէժմուկիյ սավէտանիկի աստիճան ունէր և բժշկական ինստիտուտի վերատեսուչ և բժշկական խորհրդի բարտուղար էր, երբ որ մեռաւ: Biographische Skizze des Russisch-Kaiserlichen Collegien Raths Dr. Jacob Reineggs, von J. D. Cerstenberg. Cotha und S. Petersburg. Bei Cerstenberg und Dittmar. 1797. Էջ 333—335, 377—382, 387—389:

<sup>1)</sup> Դրեալ էին մեզ վասն աղատութեան աշխարհիս մերոյ և

ԺԹՈՒՄ է թէ ումանք ըստ հաճոյից խօսելով, թէ այս ինչ և կամ այն ինչ կողմից օգնութիւն կը հասնի մեզ, մտքերիդ աղքել են... Հաւասարեալ իմացիր, որ այժմ ոչ հիւսիսային տէրութիւնից մեզ օգնութիւն կը հասնի, ոչ ել ուրիշնե-

աղջիս հոգ տանել, և ցուցեալ էիր զոմանս կերպս կարգադրութեան՝ որբ ի ջերմուանդ սիրոյդ և ի ջատագովութենէդ առ աղջս պարզմտութեամբ արտադրին ասութիւնքդ այդոքիկ: Այլ երանի էր՝ թէ զոնեա մասնաւորապէս արդիւնանային. քանզի առ այդ պիտոյ էր ամենայն աղջի մերոյ ընդ հովանեաւ հաւատացեալ և բարեմիտ ու էրանց լինել և զապահովութիւն ունել, որ ինսամածութեամբ նոցա կարիցէին ձգտի առ երջանկութիւնս, բայց աչա ըստ մեծի յասին մատնեցեալը կան ի խսութիւնս թշնամեաց անողորմից, որ հաւատարմապէս ծառայելով ևս չկարեն զողորմութիւն գտանել, ուր մեաց թէ զապստամբութիւն զուցանիցեն, որ բնաւ ոչ իսկ կարեն: Առ այս ասիցես թէ հաճիք ընդ ծառայութիւն այլազգեաց և ոչ սիրէք զազատութիւն, Բայզ լինէր՝ թէ օրհնեալդ այժմ յայս կողմունս գայիր և շրջագայէիր ի ծուլայու մինչև ցաստ և յայլ կողմունս՝ յոր զոն ազգ մեր և ականատես վերահասութեամբ իմանացիր զկացութիւնս մերազնէիդ և զանօգնականութիւնս և զրոնութիւն իշխողացն և ինքնին կնքէիր՝ թէ այս դիտմանց յարաջանալ ոչ լինի. ապա թէ հաւարաւոր իցէ յառաջանալն միթէ յիմար իշեմք, որ ի տառապանաց զերծանիլ չկարգիմք... թուի թէ ումանք ըստ հաճոյից խօսելով, թէ յայս ինչ յայս ինչ կողմանց ձեռնտութեամբ և օգնականութիւն լինիցի առաջի կայ նեղութիւն, խոշտանկում, յափշտակութիւն և սուր. իսկ եթէ անստոյդ համարիցիս զգբերքս և դարձեալ անսայցես նորա՝ որբ զչաճոյականս խօսին, ապա յայլոց հաւատարմաց տեղեկացիր՝ եթէ յանցեալ ամսն մինչ նրախեցիք ձգտեցան առ ապաւինութիւն նոցա, ի բռնաւորէն իւրեանց զինչ անցը անցին ընդ նոսա, զիարդ մահացաւ եղծալի Յովհաննէս կաթուլիկոսն և որպէս աղաւաղեցաւ սուրբ Աթոռն Գանձասարու. և այժմ ո՞ւր են մելիքազնւնքն, և զինչ կրեղին (որ և ի յառաջանալ այնց դառնութեամցն ի բանի՝ տեղեց զբեցին առ մեզ զբանս գովութեան՝ թէ յայժ բարուը էր՝ որ դուք ոչ ցուցիք առ նոսա զնշան համակամութեան և անվընաս պահեցիք զսուրբ զահդ) և ի տեղեկանալդ զայսմանէ ստուգութեամբ, ապա ընտրեա զսուան և զիրաւն և անմեղագիր լեր մեզ:

րից, այլ միայն Աստուծուց։ Նթէ մենք, թշնամիներից շրջապատուած, ո՞ր և է նշան ցոյց տանք, թէ յարւում ենք և կամ թէ աչք ենք ուղղում այդ կարծեցեալ օգնիչներին, այն ժամանակ մեզ ուրիշ բան չի սպասիլ, բայց թէ նեղութիւն, խոշտանգանք, յափշտակութիւն և սուր. իսկ եթէ մեր գրածն անստոյդ համարես և հաճոյական բան ասողներին ականջ դնես, տեղեկացիր միւս վատահելի անձերից, թէ անցեալ տարիներն ինչեր կրեցին իրենց բռնակալից արցախնցիք, երբ այն հաճոյախօսների վրայ յոյս գըլին, և ինչպէս մեռաւ խղճալի Յոյշաննէս կաթողիկոսն և ինչպէս քանդուեցաւ Գանձասարի աթոռը, և ուր են այժմ մելիքներն և ինչ աղջտներ քաշեցին նրանք։ Այդ դառնութիւնների ժամանակ մրգան տեղերից մեզ գովասանք դրեցին, թէ շատ լաւ էր, որ մենք համակրութեան նշան ցոյց չտուինք նրանց և մեր սուրբ գահը վնասներից ազատ պահեցինք։ Այս բոլորն ստուգութեամբ իմանալուց յետոյ՝ զատիր սուսան իրաւից և մեղադիր մի լինիր մեզ։

Սակայն թէպէտ Պոտեօմկին իշխանի փորձը՝ դրդելու կաթողիկոսին Հայաստանի ազատութեան նախաձեռն լինել՝ յաջողութիւն չունեցաւ, բայց և այնպէս Կայսրուհին իւր նախագծին հետևելուց յետ չկասեց։ Ռուսաց զօրքերը Վ. Ա. Զուբով կոմսի հրամանատարութեամբ դէպի Պարսկաստան խղճացին։

Արշաւանքի մերձաւոր նսպատակն էր, հրովարտակի ասեւով, «վերահաստատել Խրակլ թագաւորին իւր կալրւածների մէջ, Ռուսիայից կախուած դիրք տալ Ղարաբաղի հայ մելիքներին և նրանց հպատակ ընակիչներին։ և յօդուա մեր զրաւել Արարատեան հայրապետին, որ այնքան զօրեղ ազդեցութիւն ունի ամբողջ ցիրուցան հայ ազգի վրայ, Այս բոլորը շատ միջոցներ կրտար մեզ քրիստոնեաների զիխաւորութիւնը հաստատելու և մեր գերագոյն իշխանութիւնն ապահովելու համար»։

Պ. Ա. Զուբով կոմսը խնդիր ուղղեց Յովսէփ արքեպիսկոպոսին՝ ցոյց տալ մեզ Զեր փոյթեռանդն ծառայութեան նըշանը՝ Մովդոկ գնալ և բանակցել եղթօրս հետ Պարսկաստանի և դրան սահմանակից ազգերի գործերի մասին, որոնց վերաբերմամբ դուք այնքան ընդարձակ ու մանբամասն տեղեկութիւններ ունիք։ Յովսէփ սրբազնը փութաց ուղարկել Պ. Զուբով կոմսին իւր յօրինած տեղեկագիրը Հայաստանի և սահմանամերձ նահանգների մասին՝ դրանց աշխարհազրական քարտիզով հանդերձ. և Վ. Ա. Զուբով կոմսի հետ տեսնուելուց յե-

առյ գրեց արքեպիսկոպոս Յ. Լ. Լազարեին, թէ ևսա էլ, եղայրն էլ փափագում են, որ մենք ուղեկցենք արշաւանքին մեր ազդի քաջախըրութեան և օգտի համար: Մենք անկարող էինք մերժել և մեր տկարացած մարմինը խնայել, և կարծում ենք, թէ այս գործի վերջը Աստուծու ողորմութեամբ օգնութիւն և ապահովութիւն կը լինի մեր ազգին»:

Վ. Ա. Զուբով կոմսը 26 հոկտեմբերի 1796 ամի գրով խնդրում է Յովաչի սրբազանին գնալ միանալ Գեներալ-Մայօր Ա. Մ. Ռիմսկի-Կորսակօվի բանակին՝ «որպէս Քրիստոսի միակ հօտը հովուող բարի հովուապետ և հայցել յօգուտ քրիստոնէութեան Արարատեան հայրապետի սուրբ օրհնութիւնը մեր ապագայ գործերի վրայ, հայրապետի, որին ես ուղած եմ մի աւանձին գրութիւն և յանձնած նոյն իսկ Գեներալ-Մայօր Կորսակօվին՝ Նորին Սրբութեան հասցնելու համար»:

Դժուար գործ յանձնուեցաւ սրբազանին. Վ. Ա. Զուբով կոմսը, չնայելով իւր ջերմ ցանկութեան շուտով ազատելու քրիստոնեաններին, ստիպուած էր սակայն անտարբեր երևալ նրանց, որպէս զի մահմեդական ժողովրդին կասկածանքի տեղի չտայ: Բայց որովհետև այդ ընթացքը քրիստոնեանների նկատմամբ կարող էր խախտել նրանց վստահութիւնն և Ռուսիայի վրայ դրած յոյսերը, ուստի և նրանց հաւատը դէպի Ռուսաց կառավարութեան խոստումները վառ պահելու պաշտօնը սրբազանին յանձնեցին: Վ. Զուբով կոմսը գրում էր Ռիմսկի-Կորսակօվ զօրավարին. «Փութացէք Յովսէփ արքեպիսկոպոսի միջնորդութեամբ հաստատուն պահել Արարատեան Հայուապետին առ մեզ ցոյց տուած անձնուիրութեան մէջ»:

Յովսէփ սրբազանը շատ գործունեայ հանդիսացաւ. նա որդորում էր համբերել Աղա Մահմէդ խանի իշխանութեան տակ մտնելու պատրաստ վրաց նրակ թագաւորին՝ Ռուսաց օդնութեան յոյս տալով նրան. յորդորում էր և խաններին աջակից լինել ուստաց զօրքին, երդմամբ վստահացնելով, թէ Ռուսաստանի կողմից ոչ մի զրկանք չի հասնիլ նրանց. անձամբ միջոցներ էր մտածում ռուսաց զօրքին պարէն և պաշար, նոյն իսկ եզներ հասցնելու համար. հովուական թղթեր էր գրում Պարսկաստանի հայերին՝ «Արկնապատկել իրենց անձնուիրութիւնը գէպի Կայսերական գտնն» և այլն:

և «Անկարող եմ բաւական շնորհակալութիւն յայտնել Ձերդ և բազնութեան այդք ան մեծ ջանքերի համար, որ գործ էք

դնում յօգուտ իմ առաջնորդած զօրքերի», գրում էր 15 նոյեմբերի 1796 ամի Ծիմսկից՝Կորսակով զօրավարը Յովսէփ արքեպիսկոպոսին, «և շատ ցաւում եմ, որ այս տղմուտ ու ցեխոտ ճանապարհները յոդնեցնում են Ձեզ»։ Ելիայոյս եմ, գրում էր նա նոյեմբերի 12-ին, «որ արդէն Ձերդ սրբազնութեան հոչակը հայ դիւներում և նոյն իսկ խանի մօտ ինձ մեծապէս օդապար կըլինի այս գործի մէջ (պարէնի հայթայթման), և ես ընդ միշտ երախտապարտ և անձնուէր կը մնամ առ Ձեզ»։ Ա. Ա. Զուրօտի կոմմն էլ իւր կողմից սրբազնին անկեղծ չնորհակարութիւն յայտնելով, խնդրում էր նրան ճամակ 2 դեկտեմբերի 1796 ամի, համար 506՝ «չարունակել ընդհանուրի օգտին նուիրած փոյթեռանդն ջանքերը»։

Ղուկաս կաթողիկոսն՝ առանց խզելու բարեկամական յարաբերութիւնները խաների հետ, ոռուսաց զօրքերի Գանձակմտներուց յետոյ հազիւ կարողանում էր ծածկել իւր ուրախութիւնը սպասելով նրանց մօտենալուն կջմիածնին. սակայն յանկարծ «աշխարհիս ամենաօգտակար գործը», ինչպէս որ նա գրում էր Շամիր խանին, ընդհատուեցաւ բօթաբեր լրով, թէ Սկատելինէ Բ. վախճանուած է և ոռուսաց զօրքերը յետ են կանչւում Պարսկաստանից... Շատ ծանր միշտ պատճառեց սրբազնագոյն Ղուկասին և Վրաստանի սապատակուիլն Աղա Մահմէդ խանի կողմից։

Կայսրունու վախճանման օրից շատ չանցած, և յատկապէս 1799 թ. աշնան, Ղուկաս հայրապետը հիւանդացաւ և բաւական ժամանակ տառապելով՝ նոյն թուականի դեկտեմբերի 28-ին հոգին աւանդեց։

Երջանկայիշատակ Ղուկաս կաթողիկոսի գործունէութիւնը և անձնաւորութիւնը գնահատելիս չենք կարող անտես առնել նորան պատիւ բերող այն հանգամանքը, որ նա սին փառասիրութեան անմատչելի մնաց և վեհութեամբ կատարում էր իւր բարոյական պարտականութիւնքն Ազգի և Սկեղեցւոյ առջե, այն պարտականութիւնները, որ դնում էր նորա վրայ իւր բարձր կոչումը։ Նա չենթարկուեց ընդհանուր հոսանքին, այլ իւր լուրջ հայեացըով, հեռատեսութեամբ և զգուշաւոր ընթացքով՝ փրկեց, ինչպէս որ տեսանք, հայրապետական աթոռն և հայոց ազգը մահմեդական կառավարութեան անգութ վրէժից, որ անշուշտ նրա անդպաստութեան կը յաջորդէր, եթէ նա իւր հօտի ազգեցիկ անդամներից շատերի ստիպողական հրաւերնե-

ըին ականջ դնէր: Միւնոյն ժամանակ նա լիովին գնահատում էր իւր նախողդի գործերն և ամենայն փութով նկրտում, որ Սիմէօն կաթողիկոսի սահմանած կարգ ու կանոնն եկեղեցու ներքին վարչութեան մէջ ամրանայ և ռուսաց Կայսերական Տան հետ սկսուած յարաբերութիւնները սերտանան: Երբև իւր հօտի մտաւոր և բարոյական կրթութեան նախանձախնդիր՝ նա ոչ նիւթական միջոց էր իննայում, ոչ էլ ջանք հայերէն գրքեր տպագրելու համար: Սիմէօն կաթողիկոսի «Պարտավճարի» տըպագրութեան յառաջիկայ աւարտումն և ապա թէ «Ժամագրքի» տպագրութեան ընդ փոյթ ձեռնարկելու դիտարութիւնը Յովսէփ սրբազնին յայտնելիս՝ Ղուկաս հայրապետը, ի միջի այլոց, բողոքում էր Պետերուրգում բացուած տպարանի մէջ գրքեր տպելու առաջարկի դէմ, ասելով, թէ ռտպագրատուն ըստ մերում լիզուի գոյ և յայլ տեղիս... սակայն որպէս էր ջանք լուսահոգոյն, նոյնպէս և մեր ամենեցուն այն է ջանք և դիտումըն, զի ի սրբոյ Աթոռոյս ելցէ այսպիսի ինչ, առ նորա ի գովեստ և ի բարձրութիւն սմին և անուան լուսահոգւոյն, որ դտպագրատունն զայս հաստատեաց, զայսու որպէս զանց արարեալ յայլ տեղիս արկցուք»: «Ուրիշ տեղեր էլ հայոց տպարաններ կան, բայց նա, իւր նախողդի նման, աշխատում է, որ գրքերն էջմիածնում տպուին, որպէս զի թէ Մայր Աթոռի բարոյական հեղինակութիւնը բարձրանայ և թէ տպարանը հիմնարկողի յիշատակը մեծարութիւն:

Կաթողիկոսի այդ հոգատարութիւնը հայերի մէջ կրթութիւն և դիտութիւն տարածելու մասին, ամեն ուրեք համակրանք գտաւ: Ղուկաս հայրապետի ընդարձակ թղթակցութիւնը<sup>1)</sup> Յովսէփ սրբազնին և մանաւանդ Յ. Լազարեի, Մարգար և Փիլիպպոս Մանուչարեան եղբայրների (Մուսաստանում) և Շամիր խանի հետ (Հնդկաստանում) բացայայտ ցոյց են տալիս, թէ որքան էին հետաքրքրուում այն դարու լուսամիտ հայերն ազգային դպրոցներ հիմնելու և հայերէն գրքեր լոյս հանելու և տարածելու կարևոր խնդրով:

Այսպէս 17 յունուարի 1783 ամին նա գրում է Յովսէփի արքեպիսկոպոսին, թէ նա միանուագ 100 նամակ է արձակել: «Ի՞ւն Պատմութեան Հայոց», հատ. Դ. երես 263,

<sup>1)</sup> 17 յունուարի 1783 ամին նա գրում է Յովսէփի արքեպիսկոպոսին, թէ նա միանուագ 100 նամակ է արձակել: «Ի՞ւն Պատմութեան Հայոց», հատ. Դ. երես 263,

պատմութեան, որ կը փափագէիր շարադրուած տեսնել, — այդ  
մասին են քեզ յետոյ կը գրեմ. իսկ վասն դպրատուն հաստա-  
տելոյ ըստ երապական լսզուաց, այսպէս գիտասջիք, զի մեր լե-  
զուաւս դպրատուն, զոր ունիմք ի սուրբ Աթոռոջս՝ հազիւ պա-  
հեմք հաստատուն, ըստ որում չէ մեզ ձեռնտու որպիսութիւն  
և կացութիւն երկրից. ինձ ինչ որ վերաբերում է մի այնպի-  
սի դպրոց հաստատելուն, ուր երապական լեզուներ էլ աւան-  
դուէին, իմացիր, որ մենք ունինք Մայր Աթոռում մի դըպ-  
րատուն մեր լեզուն ուսուցանելու համար, բայց այդ էլ հազիւ  
ենք հաստատուն պահում, որովհետև երկրիս որպիսութիւնն  
և կացութիւնը ձեռնտու չեն մեզ. Այդ մի դժուար գործ է  
այժմ, իսկ յետոյ ինչ կինի — Աստծուն միայն յայտնի է:

Յովսէփ արքեպիսկոպոսի ցանկութեամբ կաթուղիկոսը  
հասցնում. էր նրան զանազան գրքեր ու ձեռագիրներ և շատ  
խելացի խորհուրդներ տալիս հրատարակելի գրքերի մասին:

Յովսէփ արքեպիսկոպոսին թողնելով Ռուսաց քաղաքական  
շրջաններում աշխատելու յօդուտ հայկական հարցի, Ղուկաս կա-  
թուղիկոսը այդպիսով չհրաժարուեց Ռուսաստանում դտնուած  
իւր եռանգուն ներկայացուցի վերայ ունեցած աղդեցութիւ-  
նից. Այդ կողմից միանգամայն ինքնուրոյն մնալով, նա ինչպէս  
երեսում է դօքտ. Թէյնգափի քաղաքական յանձնարարութեան  
արդիւնքներից, Յովսէփ արքեպիսկոպոսի ձեռքում կոյր գոր-  
ծիք չդարձաւ նոյն իսկ այն դէպքում, երբ վերջինս գործում  
էր Ռուսաց կառավարութեան նախաձեռնութեամբ և առա-  
ջարկութեամբ: Հայերի գաղթը Ռուսաստան, Նախիջնան և  
Գրիգորիոպոլ քաղաքների հիմնարկութիւնը, հոգևոր ատեանի  
հաստատութիւնն Աժտարխանում և ուռւսարնակ հայոց նոր թե-  
մի ներքին վարչութեան ուրիշ գործերը կաթողիկոսի յարատե  
հոգատարութեան առարկաներ էին և նիւթ նրա թղթակցու-  
թեան սրբազանի հետ:

Սակայն այդ գործնական խնդիրներից զատ Ղուկաս կա-  
թուղիկոսն իւր շնորհալի աշխատակցի հետ նամակներ փոխա-  
նակելիս, մանաւանդ վերջին տարիները, ստէպ ստէպ շօշա-  
փում էր և նրա ապագայի հարցը: Յովսէփ արքեպիսկոպոսը  
ինքն էլ մտատանջ էր լինում այն մասին, թէ ինչ կերպով պի-  
տի շարունակէ հայսաստանեաց եկեղեցուն ծառայել: Նա փա-  
փագում էր մի օր բազմել էջմիածնի Մայր Աթոռի վրայ, որի  
բարձունքից կարող էր մի աւելի լայն ասպարէղ բանալ ծա-

ռայելու իւր ազգին, որից այնքան տարի անջատուած էր, և ոչ ուսաց պետութեան երկու արքունիքներում իրեն շռայլած չնորհները, ոչ այդ արքունիքներու իրեն ընծայուած պատուաւոր գիրքը, ոչ էլ պետութեան մատուցած իւր ծառայութիւնների գնահատուելն և ճանաչուելը կարող եղան փարատել նրա մտքից այդ փափազը։ Չնայելով Մայր Աթոռի ընկնուած դրութեան, դրա բարոյական նշանակութիւնն այնքան մեծ էր, որ Յովսէփ արքեպիսկոպոսը սիրով պատրաստ էր փոխանակել հիւսիսային մայրաքաղաքի հեշտոնքն ու պատիները Պարսկաստանում սպասող զրկանքների ու փանգների հետ... Դեռ Սիմէոն կաթողիկոսի օրով Յովսէփ սրբազնը ցանկութիւն էր յայտնած Զմիւռնիա կամ Պօլիս առաքուելու, որոնց հայ ժողովուրդը մեծ ազգեցութիւն ունէին կաթողիկոսների ընտրութեան վրայ, սակայն այդ դիտաւորութիւնն ի գերեւ ելաւ. Դուկասի ընտրութիւնն էլ Սիմէոնի մահից յետոյ, ինչպէս տեսանք, այնպէս արագ կատարուեցաւ, որ Յովսէփը ժամանակ անգամ շգաւու յօգուտ իւր թեկնածութեան որ և է բան անելու։ Նա պարտուալատշան խոնարհութեամբ հնագանդուեցաւ ազգի նորընտիր հայրապետին, բայց և ընականաբար՝ իւր էական արժանիքների համեմատ՝ իրեն էր համարում ոչ միայն նրա օրինաւոր, այլ և արժանաւոր յաջորդը։ Արդեօք նորան յուզում էր այն միտքը թէ իւր բազմամեայ ծառայութիւնն եկեղեցուն և ազգին ուսաց պետութեան մէջ ըստ արժանւոյն կգնահատէն Ռուսաց սահմաններից դուրս եղած հայերը, որոնցից և զիլսաւորապէս կախուած էր։ Այս ըոլորն ի նկատ առնելով նա որոշեց մի նամակ գրել Ղուկաս կաթողիկոսին։ Ինչքան որ կարելի է դատել Ղուկասի պատասխանից այդ գրին՝ Յովսէփի յայտնած պիտի լինէր, թէ կարեոր է համարում էջմիածին գալ իւր թեմի մի քանի գործերի մասին հայրապետի հետ անձամբ խորհրդակցելու համար առանց յիշելու, թէ կըմնայ արդեօք էջմիածնում, թէ կըվերադառնայ Ռուսաստան, —և խնդրած, որ իւր բացակայութեան ժամանակ թեմի գործերի վարչութիւնը Սփրեմին կամ Դանիէլին յանձնուի։

Ի պատասխանի այդ գրութեան նորին Սրբութիւնը 1782 թ. իմաց տուաւ Յովսէփին, թէ անյարմար է դատում անորոշ պաշտօնով Ռուսաստան ուղարկել այդ փարդապետներից մէկին կամ միւսին, այլ թէ կըցանկար Նփրեմին եպիսկոպոս ձեռնազը և Ռուսաստանի թեմական առաջնորդ կարգել, որպէս

զի նա սկզբներում Յովսէփի ցուցմունքներով ղեկավարէ և քայլ առ քայլ ընտելանայ թեմի վարչական գործերին. ապա թէ՛ մի քանի ժամանակ անցնելուց յետոյ Յովսէփը կարող կը-լինէր Եջմիածին վերադառնալ: Յովսէփի նամակի շարժառիթ-ները հասկանալով, Ղուկաս հայրապետը շարունակում էր. «Դու ևս այդքան տարի զբաղուած էիր միայն մի թեմով, որ այնքան հեռաւոր է, սահմանի վրայ է, և յետ ես մնացել ըն-կերներիցդ: Աստուծուն և մարդկանց յայտնի է, որ մի աւելի մեծ թեմի արժանի ես. քո թեմն էլ հարկաւ փոքր չէ ուր և մեծ պատիւ կվայելեն, բայց շատ հեռաւոր է: Այդքան վաստակ-ներից յետոյ արժանի էր քեզ մի աւելի մեծ թեմ ստանալ, հօ-ափ և սեպուհների հետ ծանօթանալ, քեզ էլ նրանց ծանօթաց-նել և այդպիսի կենդրուններում Ա. Աթոռի համար աշխատելով բարի անուն ժառանգել, ինչպէս որ այստեղ ես ժառանգած: Այս մասին անշուշտ մտածում ես, ինչպէս որ գրած էիր լուսահո-դի կաթողիկոսին, հարցնելով նրան, թէ ում կըցանկար Կ. Պօլիս և կամ Զմիւռնիա առաքել: Հայրապետն ի վերջոյ ցաւ էր յայտնում, թէ Յովսէփի նման մի աշխատակից չունի Կ. Պօլսում, ուր իսկապէս, ինչպէս գրում էր նա, վճռւում են Մայր Աթոռին վերաբերեալ գործերը, և խօրհուրդ տալիս՝ յարուիլ հեռաւոր թեմին, որովհետև ազգը սովոր է նրան ընտրել, որին տեսնում ու ճանաչում է, այլ կըուել այս բոլորը և յայտնել ի-րեն, թէ ինչ կորոշէ: Արդեօք կաթողիկոսն և Յովսէփը դար-ձեալ իրար բան գրեցին այս առթիւ. — յայտնի չէ. միայն թէ սրբազանն Եջմիածին չգնաց, թէս իւր ասելով, Ղուկաս կա-թողիկոսն երկու անգամ հրաւիրեց նրան, իրը թէ գործերի վարչութիւնը նրան յանձնելու նպատակով: Թերեւս նրա գա-լուսար գիւրացնելու համար էր, որ կաթողիկոսը Ռուսաստան ուղարկեց Նվիրեմ եպիսկոպոսին: Յամենայն դէպս՝ կաթողի-կոսի մահուան օրը, 28 գեկտեմբերի 1799 ամի, Յովսէփը գեռ Ռուսաստան էր:

Ինչպէս որ երեսում է Եջմիածնի միաբանութեան նամա-կից յանուն Նվիրեմ եպիսկոպոսի 1800 թ. փետրուարի 3-ից, եկեղեցական դասն և հայ ազգի ականաւոր ներկայացուցիչներն երկու անգամ գումարուելով ժողով կազմեցին Ղուկասին յա-ջորդ ընտրելու համար և վերջապէս վճռեցին Կ. Պօլսի հայոց ժողովրդին թողնել՝ ընտրել մէկին հետևեալ երեք ընտրելինե-րից, որոնք էին՝ Կ. Պօլսի պատրիարք Դանիէլ ալքեպիսկոպո-

ուր, ոռուսիաբնակ հայոց թեմական առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոսն և Կեսարիայի թեմական առաջնորդ Ստեփաննոս արքեպիսկոպոսը: Սակայն 16 յունուարի 1800 ամի կայացած այդ ժողովի համախօսականի մէջ երկու վերջին ընարելիների անունը չկայ, իսկ Դանիէլից յետոյ երկրորդ կանդիտառ անուանուած է Սփրեմ արքեպիսկոպոսը. և ահա այդ համախօսականը տանելու համար Դաւիթ արքեպիսկոպոսը Կ. Պօլիս առաքուեցաւ: Թէսէտ ընտրողական ժողովն և կըցանկար քանդարաւոր և հաստատակամ Յովսէփին կաթողիկոս տեսնել, սակայն վախենալով մահմեդական իշխանների վրէժխնդրութիւնից այն մասնակցութեան փոխարէն, որ նա ունեցել էր ոռուաց զօրքերի արշաւանքում թիւրքերի և պարսիկների դէմ, զգուշացաւ պաշտօնապէս նրան ընտրելի հրատարակել:

Դաւիթ եպիսկոպոսի Պօլիս մեկնելուց մի քանի օր յետոյ Էջմիածին եկան Առաքել աւագ քահանայ Ղամազեանն և Յովսէփ Բեհրութեան իշխանը, մի նամակ բերելով վրաց Գէորգ Թագաւորից և մի հանրագիր Թիֆլիսի հայ հասարակութիւնից, որոնց մէջ յիշատակուում էին Յովսէփ արքեպիսկոպոսի ծառայութիւններն և առաջարկուում՝ նրան ընտրել կաթողիկոս: Այս պատճառով ընտրողական ժողովը մի նոր նիստ գումարեց և մի նոր համախօսական կազմելով, թէ կաթողիկոս՝ ընտրուած են Պօլսի պատրիարք Դանիէլ արքեպիսկոպոսն և ոռուսիաբնակ հայոց վիճակի առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոսը, այդ արձանագրութիւնը դեռ Կարին գտնուող Դաւիթ արքեպիսկոպոսին ուղարկեց, որպէս զի առաջնի հետ միաժամանակ Կ. Պօլսի հայոց համայնքին յանձնուուի: Բացի այդ՝ հայ ազգի ընտրաները, Թիֆլիսի պատգամաւորների պահանջմամբ, մի հրաւիրագիր յօրինեցին յանուն Յովսէփ արքեպիսկոպոսի, որ Գէորգ Թագաւորը պիտի հասցնէր նրան: Այդ հրաւիրագրում, ի միջի այլոց, հետեւեալ տողերը կան. և թէ դու չես վախենում այն աղէտներից, որոնք կարող են հասնել ազգին, սուրբ Աթոռին և քեզ, ուրիմն հաճիր գալ մեզ մօտ—մենք վայելուզ մեծարանքով կընդունենք քեզ. սակայն եթէ վախենաս և չկաս, մենք քեզ մեղագիր չենք լինիլ:

Ինքն Յովսէփ արքեպիսկոպոսն իւր ընտրութիւնն իսկապէս կայացած էր համարում: Վրաց Թագաւորի համակրութիւնը նրա ընտրութեան, նոյնպէս և ոռուաց կառավարութեան աջակցութիւնը, որ անշուշտ պէտք եղած դէպուտ կըհասնէր

նրան, նրա այդ համոզմունքը զօրացնում էին, և նա այդ իմաստով գրեթ էր վախանակում կ. Պօլսի պատրիարքի, վրաց Գէորգ թագաւորի, նրա Դաւիթ ժառանգի, իւր թիֆլիսարնակ աղքականների և Էջմիածնի, միաբանութեան իրեն համախոհ անդամների հետ: Բայց և այնպէս նա չէր ուզում իշմիածնի միաբանութեան և Գէորգ թագաւորի հրաւերով մեկնել տեղից, մինչև որ կ. Պօլսի ժողովուրդն ընտրութիւնը չվասերացնէ: «Ձեմ կամենում», գրում էր նա կ. Պօլիս, «ընդունել այդ կոչումը թագաւորներից և երևելի իշխաններից, այլ նախ Աստուծուց և ապա բոլոր քրիստոսասէր հայ ազգից, որի ձայնը ձայն Աստուծու հաւատալով, յօժարութեամբ կարող կլինիմ ընդունել»<sup>1)</sup>

Բերաթի երկար յապաղումը կ. Պօլսից և Դանիէլ պատուիարքի խարդաւանաց լուրերը, որ անձամբ հետամուտ էր հայրապետական Աթոռը բարձրանալու, վրդովում էին Յովսէփին, և նա այդ բուրժին վերջ դնելու համար նամակով ազգարարեց պատրիարքին, թէ ոչ ինքն, ոչ էլ Խուսիայի և Վրաստանի հաերը մի ուրիշ կաթողիկոս կընանաչեն. ուստի և խնդրեց այն գծառութիւնների առաջն առնել, որոնք կարող էին ծագել հայ ազգի մէջ: Բացի այդ՝ 28 փետրուարի 1800 ամի նա դիմեց գաղտնի խորհրդական Ս. Լ. Լաշկարիկին<sup>2)</sup> և Ղուկաս

<sup>1)</sup> «Ձեռագիր: Մեք զսյն կոչումն ոչ կամիմը լինիլ միայն ի թագաւորաց և ի կայսերաց կամ յերեւելի իշխանաց և ի մարդկանց, այլ նախ յԱստուծոյ, և ապա ի բոլոր հասարակութենէ Հայկացուն, քրիստոսասէր ժողովրդոց, որոց բազմութեան ձայն՝ ձայն Աստուծոյ հաւատալով կարասցուք յանձն առնուլ յօժար ընդունելութեամբ»: Միևնույն միաբը նա կրկնում է նոյն իսկ փետրուարի 23-ին գրած նամակում. «վեհազունից հրաման յետին համարեցի և համարիմ, զի մի՛ բանութիւն նովաւ մտղէ ի սուրբ աստիճանն, այլ տեղի ետու ազգային սովորութեանց, զի ազգն զիս և ես զազգն ընդգրկելոց եմք: Ոչ կամիմը ինքնին կարեւոր իշխանութեամբ նպաստաւորաց մերոց ելանել ի տուրբ գահը, այլ կամօքն Աստուծոյ և համահաճութեամբ հասարակ զաւակաց սուրբ Մօրն մերոյ, զի բազմասցի և վերակրկնեացի սէր և խաղաղութիւն առ ամենեսին, որովք և մեք կարասցուք զգենուլ զզօրութիւն ի բարձանց առ ի հովուել զհօտն Աստուծոյ և կրել զծանրութիւն լծոյն այնորիկա:

<sup>2)</sup> Արտաքին գործոց Պետական Յանձնաժողովի Ասիական բաժնի անդամ:

կաթողիկոսի մահուան լուրն և հանգուցեալին յաջորդելու կոչուած երկու կանդիտատի ընտրութիւնը նրան յայտնելով, խնդրեց, «եթէ հարկաւ որ համարէ՝ հասցնել այդ ի գիտութիւն առ որ անին է»։ Ըստ այսմ նոյն թուականի մարտի 16 Բարձրագոյն հրովարտակ երաւ յանուն Օսմանեան դրան ռուսաց, դեսպան Թամարայի՝ հետեւեալ բովանդակութեամբ։ «Զանացէք հայոց ազգի կաթողիկոսի ընտրութեան առթիւ աշխատել, որ Դուռը ներկայ դէպքում նոյն ազգին տրուած իրաւունքը զեղծանէ, և փոյթ տարէք, որպէս զի այդ կոչման համար մի անարժան մարդ չընտրուի, որ արծաթով և հնարքներով կարողանար ձեռք բերել միմիայն հայոց ազգի ընդհանուր հաւանութեամբ ձեռք բերելի կոչումը»։ Նոյն թուականի ապրիլի 16 դեսպանը գրում էր Լաշկարսին, թէ չնայելով հասարակ ժողովի համակրութեան Յովսէփ սրբազանին՝ հոգևորականներն և երևելիները միծապէս խոչնդուն են նրան, որովհետև երկիւղ են կրում, թէ նրա ընտրութիւնը ճնշմունք և հալածանք կը յարուցանէ Մայր Աթոռի և հայ ազգի դէմ պարսկական կառավարութեան կողմից՝ յիշեալ սրբազանի Զուբրով կոմսի արշաւանքին մասնակցելուն և Պատեօմինի իշխանի հետ ունեցած յարաբերութիւնների պատճառով։ գալով Դրան, նա չէ խառնում այդ գործին»։

Այս հանգամանքների մէջ Կ. Պօլսի հայ համայնքը Դանիէլ պատրիարքին կաթողիկոս ընտրեց, և առ արդէն պատրաստում էր էջմիածին մեկնել, երբ Թամարա դեսպանն այդ գործի միջամուտ եղաւ։ Ինչպէս երևում է նրա կայսեր ուղղած զեկուցագրեց ի <sup>18/20</sup> մայիսի՝ նա ազգարարեց Բ. դրան, թէ Կ. Պօլսի հայերը թէս լիովին գիտեն Յովսէփ սրբազանի առաւելութիւնները որ և է ուրիշ կանդիտատի առջև, բայց վախենալով Բ. Դրան հալածանքից չեն վստահանալ նրան ընտրել. այն ինչ թագաւոր կայսրին հանելի կը ինի, եթէ հայերը կաթողիկոս ընտրեն Յովսէփին, որ բոլոր հայերի վկայութեամբ տմենից աւագն է և արժանաւորը արքեպիսկոպոսների դասում և մանաւանդ անձամբ էլ ծանօթ է նորին Մեծութեան։ Սրբազանի ընտրութեան արգելք եղող վտանգները մէջ տեղից բառնալու համար անհրաժեշտ կը ինէր, որ Բ. Դուռը մի նոր ընտրութիւն կարգադրէ և ինքն հայերի առջև մատնացոյց լինի Յօվսէփի վրայ, իբրև ցանկալի կանդիտատի։ Սուլթանն այդ առաջարկութիւնն ընդունելուն պէս յանձնեց զեսպանին Թագաւոր կայսրի գիտութեան հասցնել,

թէ նրա ցանկութիւնը կըկատարուի, և նոյն օրը հրամայեց Ռենէղոս աքսորել Դանիէլ պատրիարքին, իսկ Դաւիթ արքեպիսկոպոսին Լէմնոս, որովհետեւ նա ևս Յովսէփի ընտրութեան հակառակ էր, մտադիր ինելով Դանիէլի մեկնելուց յետոյ նըրան յաջորդել կ. Պօլսում:

<sup>10/20</sup> յունիսի 1800 ամի Թամարա դեսպանն ամենահպատակորեն զեկուցանում էր, թէ «Յովսէփ արքեպիսկոպոսն այս օրերս էջմիածնի կաթողիկոս ընտրուեցաւ յընդհանուր գոհութիւն հայոց ազգի, որ իւր հակումը դէպի նա մի բազմաքանակ ստորագրութիւն կրող հանրագրով ցոյց տուաւ, որով ազգի ընտրութիւնը հաստատելու սովորական բերաթ են խնդրում Բ. Դունից»: Նորընտիր պատրիարքը Դաւիթին յանձնեց բերաթն էջմիածնին տանելու պաշտօնը և այդպիսով ազատեց նրան մօտալուա աքսորի վտանդից: Տերաթի պատճէնը՝ չնորհակալութեան նամակներով և գործին վերաբերեալ միւս թըղթերով՝ դեսպանն առաքեց վիշէ-կանցիքին, ինչպէս որ տեսանելի է նրա զեկուցազրից յանուն թագաւորի ի ¼/3 յուլիսի 1800 ամի:

Երբ Յովսէփի կաթուղիկոս ընտրութիւը պաշտօնապէս յայտնի եղաւ, Պօղոս Ա. կայսրը «Նորին Կայսերական Մեծութեան Աւագ Տիտղոսը կրող» հրովարտակով ի 28 յուլիսի 1800 ամի հետևեալ խօսքերն ուղղեց Յովսէփ հայրապետին և բովանդակ հայ ազգին.

«... Թէ ըստ օրինակի Մեր վերոյիշեալ նախնեաց և թէ մանաւանդ ի նշան Մեր յատուկ գոհունակութեան նրա (Յովսէփի կաթողիկոսի) ջերմեւանդն գործերից, Մենք հաւաստելով հանդերձ, թէ միշտ Մեր Կայսերական զթութիւնն և բարեհաճութիւնը կընծայենք նոյն Յովսէփ կաթողիկոսին և հայոց հայրապետական աթոռի բոլոր յաջորդներին, եւս և մելիքներին, իւզբաններին և կառավարիչներին և համայն պատուելի հայոց ազգին, —թոյլ ենք տալիս նրան, Յովսէփ կաթողիկոսին և նրա հայրապետական աթոռի յաջորդներին՝ հոգեսոր հանդամանքների և եկեղեցական ծէսերի վերաբերեալ գործերում առաջուայ պէս իւր իրաւասութեան ներքոյ պահել Մեր պետութեան մէջ ըընակուող և Մեղ հպատակ հայազգի և հայադաւան մարդկերանց: Վստահ թող լինին նոյն ամենազնիւ Յովսէփ կաթողիկոսը, արգոյ մելիքներն, իւզբաններն ու կառավարիչներն և ամբողջ յարգելի հայոց ազգը եւ մանաւանդ Մեր պետութեան

մէջ բնակուող և Մեզ հալատակ հայերը՝ որ Մեր հաճութիւնն և թեարկութիւնն ընդ միշտ նրանցից անկապտելի կըմնան»:

Բացի այդ՝ նոյն թուականի նոյեմբեր ամսին բարձրագոյն հրովարտակ գրուեցաւ Կ. Պօլսի ռուսաց դեսպանին, թէ «Պատուիրում ենք Ձեզ ամեն հնար եղած նպաստ ու պաշտպանութիւն հասցնել հայոց Հայրապետի (Յովաչփի) կողմից Թիւրքիայի մայրաքաղաքն առաջքուող հոգենոր պաշտօնեաներին այն ամեն պարագաներում, ուր նրանք կարիք կ'ունենան, և ըստ ամենայնի նոյն հրովարտակի (11 յունի. 1781 ամի) համեմատ վարուիլ»:

Ապա թէ վրաց Գէորգ Բագաւորին գրուեցաւ. «Առաջարկում ենք Ձերդ Բարձրութեան՝ հայրապետի Ձեր երկիրը ժամանելուն պէս՝ Ձեզ յայտնի հին եղանակով և հանդիսով ընդունել նրան և այդ տեղից իւր սրբազն կոչման վայել շուշ ու պատուով և թիկնապահ զինուորներով ճանապարհ դնել կայսյու ենք, որ Ձերդ Բարձրութիւնը առաւել մնծ փութով կաշխատի այդ մասին, որովհետև Հայրապետը, Մեր կայրութեան մէջ արքեպիսկոպոս լինելուց յետոյ, Մեր ձեռքով է հաստատուած իւր այդ նոր աստիճանում»:

Յովսէփի կաթողիկոսն էլ իւր կողմից՝ յառաջ քան Ռուսաստանից մեկնելը մի թուղթ ուղղեց ռուսաց կառավարութեան, որով միջնորդում էր՝ «ի տրիտուր իւր ծառայութեանց, որ մատուցել է ռուսաց պետութեան, ի յարգանս հայրապետի վսեմ կոչման և ի նշան ամենողորմած բարեհաճութեան դէպի հայ ազգը հոգ տանել իւր հօտի պէտքերի մասին» և վարձատրել իւր մերձաւոր աշխատակիցներին. միննոյն ժամանակ մատնացոյց լինում Գրիգոր վարդապետի վերայ, որպէս իւր յաջորդի, որին մտադիր էր եպիսկոպոս ձեռնազըրել: Խնդրուած կէտերից շատերը կատարուեցան և բացի այդ՝ «ի յարգանս», առուած է հրովարտակում, հայրապետի ծառայութեանց յօգուտ մեր Կայսրութեան» այն ռոճիկը, որ նա ստանում էր իրեն Ռուսաստանի վիճակաւոր առաջնորդ, մշտոկան թոշակի վերածուեցաւ և նրան 25 արշին զգեստացու դիակալ ընծայեցին: Ռուսոտապչին կոմսն այդ մասին զեկուցում տալով Հայրապետին գրում էր. «Նորին Կայսերական Մեծութիւնը բարեսիրաբար հաճեցաւ այս չնորհումներով որոշել Ձեզ միւս հայրապետներից, Ձեր նախորդներից .. Հաղորդում եմ Ձեզ, որ Ձեր այս

տեղ վարած առաջնորդուկան պաշտօնի յաջորդին էլ մի վայելուչ և ոճիկ կը յատկացուի»:

Յ0 Հոկտեմբերի 1800 ամի հրովարտակով հրամայում էր Աժտարիսանի նահանգապետ գեներալ-Լէյտենանտ Կնորրինդին՝ «Հայրապետին մինչև Թիֆլիս հասցնելու համար տալ նըրան մի վայելու յուղարկաւոր վաշտ կազակների աւագ սպայով, որ կարենար ծառայել նըրան իբրև պրիստու յանձնակատար»:

Բարձրագոյն հրովարտակը, օսմանեան դրան բերաթն և միւս թղթերը հասան Յովսէփ կաթողիկոսին Աժտարիսանում 18 նոյեմբերի, և այնուհետև նա ճանապարհ ընկաւ դէպի Էջմիածին, Սահմանամերձ Մողդոկ քաղաքը ժամանելուց յիսոյ նա 18 յունուարի 1801 թ. մի նամակ առաքեց Ռուսուպչին կոմսին, որով դարձեալ չնորհակալութիւն էր յայտնում իւր գտած կայսերական չնորհների վուխարէն. Այդ նամակը հետեւեալ խօսքերով է վերջանում. «Եթէ Նորին Կայսերական Մեծութեան Ամենաողորմած թագաւորին երբ եիցէ հաճոյ թուի իւր ողորմած հայեցուածքը դարձնել Սրարատեան նահանգի և իմ հայրապետանիստ Էջմիածնի մենաստանի, իւր խոնարհ ու հաւատարիմ աղօթարարի վերայ, կարելի է պատսպարել նըրանց թշնամիների յարձակումից մի զօրաբաժնով, որի վրայ, ըստ իս, լաւ կըլինէր հրամանատար նշանակել այն երկիրն և ազգերի բարեն ու վարքը լաւ ճանաչող հեծելազօրի գեներալ Սաւելյանին»:

Ռուսուպչին կոմսն իւր կողմից՝ ըստ բարձրագոյն հրամանի գրում էր Հայրապետին (11 յունվ. 1801), թէ «Վեհափառ Կայսրը հաւատարով հաւատում է Զեր երախտագիտութեան ցոյցերին և Զեր անկեղծ հաւատարմութեան իւր գահին, մանաւանդ որ դուք այդ բոլորը նշանաւոր գործերով հաւատած էք, վասնորոյ և առանց բնաւ երկրայելու կարող էք առաջային ևս յոյս դնել նըրա արքայական բարեհաճութեան և հովանաւորութեան վրայ, որոնք Զեր մասնաւոր անձնութիւռութեան պատճառով յատուկ Զեր անձին և համայն ազնիւ հայաղի վրայ տարածուած կըմնան»:

Հայրապետը Թիֆլիս ժամանեց 10 փետրուարի 1801 ամիւ Գէորգ թագաւորին այլ ևս կենդանի չգտաւու Գեներալ Մայօր Լազարել 11 փետրուարի ծանուցանում էր գեներալ Մայօր Կնորինդին. «Նորին Սրբութիւնը հայոց Յովսէփ Հայրապետն

երէկ Թիֆլիս ժամանելուն պէս՝ Յովհաննէս արքայորդին իւր ամենալաւ իշխանների հետ միասին դիմաւորեց նրան Կուկի կոչուած գիւղի մօտ. Այնուհետև՝ մինչ նա անցնում էր՝ ռմբացութիւն եղաւ. իսկ նրա քաղաք մտնելու բոպէին ընդ առաջ եղաւ դռների մօտ հաւաքուած եկեղեցական դասը հանդիսաւոր զգեստաւորութեամբ. ուր նորին սրբութիւնն ևս զգեստ հագաւ, ապա թէ հետի գնաց մինչև հայոց Վանքի եկեղեցին և այս տեղ թագաւոր Կայսրի արևշատութեան համար մաղթանք կատարեց, մի պատշաճ քարոզ ասելով ժողովրդին: Հասցնելով այս ի գիտութիւն Ձերդ գերազանցութեան, կաւելացնեմ, որ ես էլ գեներալ-Մայօր Գովկեակօփի և մի քանի սպանների հետ դիմաւորեցի նրան Կուկի գիւղի մօտերքում: — «Իմ Թիֆլիս գալուց յետոյ», գրում էր Հայրապետը Ռոստոպչին կոմսին, շտեղույս հանդամանքների հետ ծանօթանալով, բաւական յաջողեցայ յունկներութիւն և ի հանգանդութիւն իմ Կայսրին բերել թէ արքայորդիներին, որոնց հետ անձամբ տեսակցութիւն ունեցայ և թէ անուանի իշխաններին: Թագաւորիս շնորհները վայելելով հոգեպէս միմիթարուած եմ, որ գէթ մասամբ նպաստաւոր եղայ նորին Կայսերական Մեծութեան սրբազան կամքի իրագործման և օգտաւէտ վրաց թագաւորութեան՝ դրան ընդ միշտ Ռուսաց Պետութեան հետ միացնող Բարձրագոյն մանիքէստի հարատարակման գործում: Այս իսկ Բարձրագոյն կամքի իրագործման համար շատ աշխատանք կիեց իւր ծառայութեան պարտքին համեմատ նաև գեներալ-մայօր Լազարես. Վրաստանը համայն Ռուսիայի հպատակութեան ներքոյ դնող Բարձրագոյն մանիքէստը ամսոյս 16-ին վրաց եկեղեցու մէջ յայտարարելուց յետոյ՝ նոյնը մի առանձին հաղորդագրութեամբ ուղարկեց և ինձ հայոց եկեղեցում ծանուցանելու համար. որ և ես ամսոյս 17-ին ընդհանուր հանութեամբ և պատշաճաւոր հանդիսով հրատարակեցի: Այս առթիւ տեղի գտած հանդիսի կարգը պատիւ ունիմ ներկայացնել ընդ սմին»:

Մինչ այս մինչ այն՝ երեք եպիսկոպոսից բաղկացած մի պատգամաւորութիւն եկաւ էջմիածնից՝ կաթողիկոսին Մայր Աթոռը տանելու համար: Նորին Սրբութիւնն արդէն պատրաստւում էր ճանապարհ ընկնել և բարի մնայի այցելութիւններ էր անում: Փետրուարի 27 նա կամեցաւ բաղանիք գնար. Դարիա թագուհին այդ իմանալով, առաջարկեց նրան Արքայական կոչուած բաղանիքը, որ այն ժամանակ թագուհուն էր

պատկանում։ Հայրապեան ընդունեց այդ առաջարկը. սակայն բաղանիքից յետ գալուն պէս տկարութիւն զգաց և անկողին մտաւ. հիւանդի դրութիւնն օր ըստ օրէ ծանրացաւ, և մարտի 9-ին նա իւր հոգին տւանդեց։ Մահուան մերձենալը զգալով, նա կանչեց իւր մօտ էջմիածնից պատգամաւար եկած Սիմէոն եպիսկոպոսին, խոստովանուեցաւ, հաղորդութիւն ընդունեց և առաւօտեան 9<sup>1/2</sup>, ժամին հանդեւաւ ի տէր եղբօր գերդաստանի շրջանում։ Մեանելուց առաջ նա խնդրեց Սիմէոն եպիսկոպոսին և իւր մօտ գտնուող Դրիգոր վարդապետին՝ անյապաղ էջմիածին ուղարկել իւր գոյքը, «ուրպէս զի իւր հոգու վրայ մեղք չմնայ»—բացի մի փոքրիկ ափից, որ պարունակում էր յատուկ իրեն ընծայուած մի քանի թանկագին իրեր, այդ տուփը նա խնդրեց տալ իւր եղորդը. Սողոմոն իշխանին։ Խընդրեց թաղել իւր մարմինն էջմիածնում, Սիմէոն կաթողիկոսի գերեզմանին կից։

Զենք-յապաղի այն զրոյցների վրայ, որոնք մինչև այս օր չեն մոռացուած հայերի մէջ, իր թէ նա թունաւորուած էր. այդ զրոյցները որ և է իրական հիմք չունին. Նրա կեանքը ցանկալի էր նրան շրջապատող անձերին։

Այդպէս առոյդ հասակում խափանուեցաւ ի Ռուսաստան Հայաստանեաց եկեղեցու առաջին ներկայացուցի գործունէութիւնը, այն չքեղ ձիքերով օժտուած մարդու, որ նշանաւոր երախտիք արաւ կառավարութեան և իւր Եկեղեցուն և Ռուսաց միապետների առջև շնորհ ու հովանաւորութիւն վաստակեց ոչ միայն իւր, այլ և թէ առուսիաբնակ և թէ օտարաբնակ համազգիների օգտի համար։ Նա հաստատեց իւր ամբողջ հօտի գիտակցութեան մէջ այն գաղափարը, թէ հայ ազգի ուղղի հասկացուած շահերը լիովին համակերպ են Ռուսաստանի շահերին և դրա բարձր կոչման Արևելքում. նա մի պայծառ օրինակ հանդիսացաւ իւր յաջորդների, այն է՝ ամենայն հայոց կաթողիկոսների համար, որոնք նրա գծած շաւով ընթացան. Նրա օրինակով ներշնչուած էր ներսէս կաթողիկոսը, որ անձնուիրութեան և անձնուրացութեան բազմաթիւ գործեր կատարեց Ռուսիայի տիրապետութիւնն իւր հայրենեաց մէջ հաստատելու համար 1827—29 թ. թ. պարսից ու թիւրքաց պատերազմների ժամանակ, և նմանապէս մեծ պատիւներ ու շնորհ գտաւ Ռուսաց Միապետների առջև և յարգանք նրանց պետական մարդկանցից։

Այսպէս ուրեմն Պետրոս Մեծի ժամանակից ի վեր Ռուսաստանի և հայ ազգի միջև հաստատուած բարոյական կապն և մտերմութիւնը լիովին դիտակցօրէն ամրացան Եկատերինէի իմաստուն կառավարութեան օրոյ. և այդ յարաբերութիւնների բնական հետևանք էին Ռուսաստանի ամեն կողմանց հայերի բոլորանուէր հաւատարմութիւնն և նրանց մատուցած երախտիքը, որոնք բազմաթիւ հրովարտակներով յանուն հայ ազգի և նրա հայրապետների վաւերացուած ևն նոյն իսկ Դահի բարձունքից:

Իւր հայրենիքին լաւութիւն կամեցող իւրաքանչիւր քաղաքացու, և մանաւանդ իշխանութիւն վայելող մարդու սուրբ պարտքն է վառ պահել այդ զգացումներն և նպաստել դրանց զարդացման. բարի ծառայութիւն անող չեն նրանք, որոնք թուլացնում են այդ բարոյական շաղկապներն և փոխադարձ անվստահութիւն զրգուում այնտեղ, ուր դրա համար ընաւ պատմական հիմք չկայ. Անցեալի ծանօթութիւնը վերացնում է մէջ տեղից թիւրիմացութեան առիթներն և փոխադարձ համակրութեան ու յարգանքի բարի զգացումներ յառաջ բերում: Նրջանիկ կը համարենք մեզ, եթէ մեր հետազօտութիւնը գէթ փոքը ի շատէ նպաստէ այդ գործին:

ԿԱՐԱՊԵՏ ԽԶԵՍՆՑ